ՆՈՒԱԳՆԵՐ

Մի զարմանար, որ դիշերով
Պատուհանիդ ես տակին
Չեմ թափառում սիրաբորբոք
Ու հեկեկում վշտալին։
Մի զարմանար, որ չեմ չոգում
Լաց ու թացով քո առաջ,
Թերևսիտ Ջահէլի պէս՝
Հանում հառաչ ու թառաչ։
Մինթէ ցաւոտ սրտիս երգը
Բաւական չէ քեզ համար.
Մինթէ ալս իմ նուագները
Արցունքներ չեն անսպառ...

* *

Թէպէտ երգիս բարձրալուր է,
Հանրահռչակ ու լայտնի.
Բայց երգիս մէջ իմ դիցուհին
Աքօղուած է ու դաղտնի։
Գեղեցկուհի ծանօթներիս
Լսում են իմ երգերը,
Կասկածանքով ու մտատանջ
Կարդում սիրոյս վէպերը։
Եւ ամեն մի գեղեցկուհի
Անց է կացնում իր մտքով՝
Զը լինի թէ բանաստեղծը
Ինձ է երգում իր երգով։
Իսկ դու, անգութ, դու, քարասիրտ,
Ոչ իմ երգը հասկացար,
Ոչ մտքովդդ դու անց կացրիր,
Որ երգում եմ քեզ համար։

ՑԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆՑ